ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1953 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԴԵՐԻ ՆՈՐ ԿԵՆՑԱՂԸ

Սովետական Հայաստանում ապրող քրդերը, իբրև խաշնարած ցեղեր, անցյալում քոչվորական և կիսաքոչվորական կյանք էին վարում։ Նրանք իրենց կյանքի մեծ մասը անց էին կացնում Արագած, Ալմաղանի և Պահկունյաց լեռներում, ապրում էին օրաներում[1]։ Նրանք հիմնականում զբաղվում էին անասնապահությամբ և երկրագործությամբ։ Բացի կապերտագործությունից, գորգագործությունից և ասեղնագործությունից, այլ արհեստներ չունեին։ Հայտնի են քրդուհիների ձեռքով գործված, ցեղերի անուններ կրող «Ջիլի» (ծիլեր), «Մըլի» (Թիավոր), «Խանքեֆի» (խանի ճաշակով) և այլ գորգերը, որոնց օրնամենտների վրա կարելի է տեսնել պաշտամունքի Мәләкәтаус[2], тәйрe симьрь (Սրնամ հավքի) պատկերները։

Քոչվորական կյանք վարող քրդերը ապրում էին լեռներում, կոների (վրանների) մեջ։

Կոնը բաժանվում էր չիթերով (միջնորմերով), որոնք հյուսվում էին գույնզգույն թելերից և զարդարվում օրնամենտներով։

Նստակյաց կյանք վարող քրդերն ապրում էին գյուղերում։ Սրանց տները կառուցվում էին երեք ձևի։ Բացի տնտեսական ու բնական պայմանները նկատի ունենալուց, քրդերը նկատի էին ունենում նաև պաշտամունքի թելադրանքը. օրինակ, եզդի քրդերի տան դռները մեծ մասամբ նայում էին դեպի շամսը (արևը, արևելյան կողմը), մահմեդական քրդերինը՝ դեպի հարավ (Մեկկա-Մեդինա), երրորդ՝ հայկական նախկին գյուղերի տները նման են հայկական տներին։

Իբրև ժամանցի վայր հավաքվում էին տան բաժանմունքներից մեկի՝ օդայի մեջ։ Այնտեղ խոսում էին, զրուցում իրենց անցյալի և առօրյա խնդիրների շուրջը։ Դանգբեժներն (երգիչներն) ու գուսաններն երգում, նվագում էին հերոսական, գյուցազնական երգեր, որոնց մեջ պատկերվում էին նախնիների հերոսական անցյալը, պապերի վախկոտությունն ու քաջագործությունները, պայքար ընդդեմ չարին, ընդդեմ ամեն տեսակ նվաճողների ու շահագործողների, պատկերվում էին ուրախություն ու վիշտ՝ պարուրված փիլիսոփայական խոհերով, կյանքի ու բնության տարրերի մասին բազմապիսի գեղումներով։

Քրդական Мала мәзьн (մեծ տուն) (գերդաստանը) քայքայվելուց հետո, բաժանվող եղբայրներն ու հորեղբայրները և մյուս пьсмамнер[3] կառուցում էին կից տներ, որոնք բաժանվում էին մի պատով։ Պատի մեջտեղը բաց էին թողնում մի դուրըկ (անցք), որի միջոցով պըսմամները վրիժառության, ցեղամիջյան և ներցեղային կռիվների, գողության և այլ պատահարների ժամանակ հեշտությամբ կապ էին պահպանում միմյանց հետ։

Բացի դուրըկից, երկու կամ ավելի կից տների միջև՝ մի պատի մեջ կառուցվում էր նաև սաքուն, որի վրա դնում էին անկողին և իրեր։ Սաքուի մեջ պահում էին նաև զենքեր։ Երկու արնակիցները իրենց տների կողմից անցքեր ունեին դեպի այդ սաքուն, վտանգի ժամանակ պսմամները՝ ամեն մեկն իր տան կողմից սաքուից զենքեր էին հանում և օգտագործում։

Պսմամներն ունեին իրենց ցեղական, բարական (պատրոնիմիական) գերեզմանա-

---

1 Օբա—արնակիցների վրանների մի խումբ։

2 Մալաքեաաուս—արարերեն՝ Սիրամարգ հրեշտակ բառն է, եզդիների մոտ երկրագործության աստվածը։

3 Պսմամ—արնակից, ազգակից։

տները, որոնց ծնողները կարելի է տեսնել Հայկական ՍՍՌ Ապարանի շրջանի Ջառջառիս և Արթիկի շրջանի Քարվանսարա գյուղերում։ Գերեզմանաքարերի վրա հայերեն տառերով գրված է մեռածի անունը, հոր անունը և նրա դրական հատկությունները։

Քրդերն ունեին ցեղական կամ բարական առանձին հողաբաժիններ և սրբավայրեր։

Բարերն իրենց անասունները միասին էին պահում, ունեին ընդհանուր հողամասեր քաշող անասուններով և երկրագործական գործիքներով օգնում էին իրար, նրանք իրար նկատմամբ հայրեր և մայրեր էին և ունեին կից տների խմբեր։

Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում՝ քրդերի մեջ գոյություն ուներ պատրոնիմիա։ Պատրոնիմիական այս խմբերը կիսաքոչվորական և նստակյաց կյանք էին վարում։ Տարվա մեջ նոր արոտավայրեր ձեռք բերելու համար մի վայրից տեղափոխվում էին մի այլ բնակավայր, մի պետության սահմանից մի այլ պետության սահման, ուր հնարավոր էր ոչխար պահել և ձմռան եղանակին ապաստան գտնել։

Սեփականատիրական հողի վրա հաճախ առաջ էին գալիս ցեղամիջյան և ներցեղային կռիվներ, որոնց հետևանքով ծագում էր երկարատև վրեժխնդրություն։

Թշնամի ցեղերը չէին կարող ապրել կողք-կողքի, պետք է հեռանային միմյանցից, թեկուզ մի պետության սահմանից անցնելով մի այլ պետության սահմանը, դերադանցապես ձգտելով դեպի Ռուսաստան։

Ջմաաsա ռօւս դիա բենաrանա (ռուս ժողովուրդը անճարների մայրն է) ասում էին նրանք։

Քրդական ամեն մի ցեղ ուներ իր ծերակույտը, որը ղեկավարում էր ցեղապետը։

Ամեն մի քուրդ պարտավոր էր կատարել ծերակույտի որոշումը ամենայն ճշտությամբ։ Ցեղապետներն արենակցական կապերի անվան տակ շահագործում էին իրենց ջոլեrին (ցեղի անդամներին), խուլամներին (ծառաներին). օրինակ, աղայի ոչխարը ջոլն էր պահում և դրա համար տարեկան ստանում էր չնչին աշխատավարձ։

Սարը բարձրանալու ժամանակ ջոլը պարտավոր էր իր ցեղապետի գույքը, վրանը տեղափոխել, յայլայում կամ ձմեռանոցում նրա կյանքը պահպանել։ Ջոլը ամեն տարի պետք է իր ցեղապետին նվերներ տար։ Ցեղապետն անիմաստ էր համարում ցեղի անդամների բոլոր գործերով զբաղվել, դրա համար ցեղի միջի «մանր-մունր գործերը» նա հանձնում էր ռիսպիին[1], որն իր հերթին շահագործում էր աշխատավորներին։

Ցեղապետները պատժի միջոցներ գործադրելու կատարյալ իրավունք ունեին՝ բացի գլխատումից։

Բացի ցեղապետությունից, քրդերի մեջ տիրում էր նաև մալխոեօւբյաՑ (ավագության) կարգը, համարյա նույն ձևով, ինչպես տեսնում ենք օսերի մոտ, որոնց կենցաղը մանրամասն նկարագրել է Մաքսիմ Կովալևսկին իր „Современный обычай и древний закон" աշխատության մեջ։

Ընտանիքի անդամները մալխոների խորհրդով էին շարժվում։ Չնայած քրդուհու ճնշված վիճակին, նա առանց երեսը ծածկելու երբեմն խառնվում էր հասարակական գործերին, անգամ մասնակցում վրիժառությանը, ցեղամիջյան կռիվներին, այնպես, ինչպես տեսնում ենք իրեռկեզների և գուրոնների մոտ՝ 19-րդ դարում։ Քրդուհու այդ առանձնահատկությունները մատրիարխատի ցայտուն հետքերից մեկը պետք է համարել քրդերի կենցաղում։ Հետագայում քրդական ընտանիքում առաջացան նոր փոփոխություններ։ Ամուսինները դարձան առավել ինքնիշխան իրենց կանանց նկատմամբ։ Նրանք անգամ կարող էին սպանել իրենց կանանց՝ խանդի կամ մի այլ դանցանքի հողի վրա։

Ֆրիդրիխ Էնգելսը պատրիարխալ ընտանիքում կնոջ ճնշված վիճակի մասին խոսելիս, գրում է «Կնոջ հավատարմությունը, ուրեմն նաև երեխաների որոշ հորից սերված լինելն ապահովելու համար կինը բացարձակորեն մատնվում է ադամարդու իշխանությանը. եթե տղամարդն սպանում է իր կնոջը, նա դրանով միայն իր իրավունքն է գործադրում»[2]։

Քրդուհիները տղամարդու հետ սեղան չէին նստում։ Հարսները չխոսկան էին։ Ծնողները իրենց աղջիկներին ամուսնացնում էին առանց նրանց կամքը հարցնելու։ Դրա

---

[1] Ռիսպի—բառացի նշանակում է սպիտակ դեմքով մարդ, այսինքն ծերուկ, փոխաբերական մտքով գյուղի քյոխվան։

[2] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 77։

համար էլ հաճախ, քրդուհին ինքն էր կազմակերպում իր առևանդումը սիրած երիտասարդի հետ, որի հետևանքով ծագում էր վրիժառությունը, ամենօրյա «բսակությունը»[1]:

Մալխոեության կարգի համաձայն փոքր եղբայրները ենթարկվում էին մեծ եղբայրներին, տան ունեցվածքի նկատմամբ ևս մալխոեն ինքնիշխան էր:

Նախասովետական Հայաստանում քրդերը կուլտուրապես շատ հետամնաց էին: Ցարական կառավարությունը նրանց համար Հայաստանում (Ապարանի շրջանի Մեծ Ջամաուշլի գյուղում) մի դպրոց էր բաց արել:

Վատթար վիճակում էր գտնվում նաև քրդերի առողջապահական վիճակը: Ոչ միայն քրդական, այլ նաև հայկական շրջաններում գոյություն չունեին հիվանդանոցներ, դեղատներ, բուժօգնություն: Քրդերը լինելով անգրագետ, առողջանալու կամ բուժվելու համար իրենց հույսը դնում էին ժողովրդական դեղերի, քոչուկների (կախարդների) և դերբնական ուժերի վրա:

* * *

Քրդերին անցյալի դաժան պայմաններից, խավարից, ճնշումից ու հալածանքներից փրկեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան: Քուրդ աշխատավորությունը ազատագրվեց ոչ միայն պետական դաժան կարգերից, այլ իր սեփական ճնշողներից՝ աղաներից ու բեկերից, էլբաշիների, ցեղապետների շահագործումից:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո քոչվոր քրդերը իմացան, որ Սովետական իշխանությունը ամենալավ հողերը տալիս է գյուղի աշխատավորությանը: Նրանք պետությունից հող ստացան և սկսեցին զբաղվել երկրագործությամբ:

Այսպիսով, 1921 թվականից հետո Հայաստանի քրդերի մեջ սկսվեց քոչվորությունից նստակյաց կյանքին անցնելու պրոցեսը: Այդ պրոցեսն արագացնելու գործում 1921—1928 թթ. մեծ նշանակություն ունեցան գյուղի կոոպերացումը, վարկային ընկերությունները, փոկերը, չքավորական խմբակները և հողօգտագործման արտելները: Օրինակ՝ սերմացու, լծկաններ և երկրագործական գործիքներ ձեռք բերելու համար վարկային ընկերությունները վարկավորում էին չքավոր քրդերին, իսկ փոկերը նյութական անվերադարձ օգնություն էին ցույց տալիս նրանց:

Քրդերը 1925 թ. սկսած անդամագրվում էին նաև հողօգտագործման արտելին: Գյուղերում հողօգտագործման արտելները կազմակերպվելուց հետո հողը առհավետ տրվեց կոլեկտիվ տնտեսություններին: Այս շրջանում ցեղերն արդեն վերացել էին: Ղեկավարվում էին պետական օրգանների միջոցով:

1929—34 թթ. Հայաստանի քրդաբնակ գյուղերում կազմակերպվեցին կոլտնտեսություններ: Աղաներն ու բեկերը, դաուլամանդները (կուլակները) և հոգևորականները կատաղի պայքար էին տանում կոլտնտեսություններ կազմակերպելու դեմ: Նրանք դիմում էին հին և վատ սովորությունների, հրահրում էին ցեղամիջյան և ներցեղային կռիվներ, ինչպես, օրինակ, վրիժառության, թայֆաբազության, կրոնական հավատալիքների և այլ հոգի վրա:

1936 թ. Հայաստանի քրդերի մոտ 90 տոկոսը մտել էր կոլեկտիվ տնտեսությունների մեջ, մնացած մասը անհատական կիսաքոչվորական կյանք էր վարում:

Կոլտնտեսային կարգերի շնորհիվ քրդերը Հայաստանում, ինչպես նաև Ադրբեջանում վերջնականապես նստակյաց դարձան: Կոլտնտեսականներին սկսեցին սպասարկել մեքենատրակտորային կայանները: Գյուղում նահապետական արորի փոխարեն սկսեցին գործել տրակտորն ու կոմբայնը, շարքացանն ու կալսիչ մեքենան, խոտհնձող և երկրագործական այլ մեքենաները, որոնք վարում են սովետական օրով ստեղծված քուրդ կադրերը:

Բասարգեչարի, Ապարանի, Թալինի շրջանների կոլտնտեսականների հիմնական զբաղմունքն այժմ երկրագործությունն է: Ապարանի շրջանում սկսվել է նաև մեղվարուծությունը:

Այս շրջանների կոլտնտեսությունները աճեցնում են ցորեն, գարի և փոքր չափով՝ տարեկան: Վերջերս նրանք աճեցրել են նաև լեռնային կլիմայական պայմաններում աճող քառակուսի քիստավոր գարի, որի բերքատվությունը համեմատած տեղական գարու հետ, եր-

---

1 Բսակ—բառացի նշանակում է սպասել, այստեղ բսակ բառը գործ է ածվում վրեժառնելու իմաստով:

կուսից-երեք անգամ ավելի է։ Թալինի շրջանում կոլտնտեսություններն աճեցրին «գալ-գալոց» կոչված ցորենը, որից նույնպես առատ բերք է ստացվում։

Բերքատվությանն օգնում է հողերի պարարտացումը և ոռոգումը։ Թե հանրային և թե անձնական տնամերձ հողամասերը պարարտացվում են պարարտանյութերով։ Ըստ կոլտնտեսության վարչությունների տվյալների՝ այդ նպատակի համար օգտագործում են ցիանամիդ կալցիում, սուպերֆոսֆատ, գոմաղբ և մոխիր։

Անցյալում քրդերն ամոթ էին համարում բանջարաբուծությամբ զբաղվելը, այժմ զբաղվում են նաև բանջարաբուծությամբ։ Ցանում են «կոտեմ», «սավզի», «համեմ» և կարտոֆել. վերջինիս մշակությունը Ապարանի թե հայկական և թե քրդական կոլտնտեսություններում լայն տարածում է գտել։ Մեծ դարկ է տրվում ոչխարաբուծության և կովաբուծության զարգացմանը։ Կոլտնտեսություններում անընդհատ բազմացնում են անասունների այսպես կոչված «ազնիվ» տեսակները՝ տոհմային կովեր, «մերինոս» և «ռամբուլ» (հոտկ) կոչված ոչխարները, որոնց բուրդը թանկարժեք է։ Սրանք արդեն լայն տարածում են գտել Բասարգեչարի և Թալինի շրջանների քրդարնակ, ինչպես նաև հայկական և ադրբեջանական գյուղերի անասնապահական ֆերմաներում։

Քրդական կոլտնտեսությունների թերություններից մեկն այն է, որ նրանք քիչ ուշադրություն են դարձնում թռչնաբուծության և խոզաբուծության վրա։

Խոշոր եղջերավոր անասունների պահպանման համար քրդական գյուղերի կոլտնտեսությունները կառուցել են տիպային գոմեր, ախոռներ և փարախներ։ Ձմռան եղանակին անասունների համար որպես ամենալավ կեր պատրաստում են սիլոս։ Սիլոսը պահում են գրսում (թաուլաների մոտ) փորած մեծ հորերում։ Քրդերն այս կերի մասին նախասովետական Հայաստանում գաղափար չունեին։ Սա նորամուծություն է քրդական գյուղում։

Կոլտնտեսությունը զարգացնելու, սոցիալիստական դաշտերը լավ մշակելու և արդյունավետ դարձնելու համար գործադրվում են աշխատանքի դանադան ձևեր, որոնք արդեն մտել են գյուղի արտադրական կենցաղի մեջ։

Թալինի և Ապարանի շրջանների գյուղերում կան անասնապահական և դաշտավարական մշտական բրիգադաներ, որոնք ունեն իրենց աշխատանքի տարեկան և եռամսյա պլանները։

Գյուղի ընտանիքները բաժանվում են բրիգադաների, ամեն մի ընտանիքից միջին հաշվով բրիգադայում աշխատում են 2—4 մարդ, ուստի դաշտային բրիգադան միջին հաշվով ունենում է 40 60 աշխատունակ մարդ։ Լեռնային վայրերում բրիգադան բաժանվում է օղակների, ամեն մի օղակ ունենում է 10—12 հոգի։

Անասնապահական բրիգադաներից նշանակվում են նախրապահներ, հովիվներ և կթվորներ։

Տրակտորիստների հանդիստը դաշտային աշխատանքների ժամանակ կազմակերպելու համար կառուցված են փոքրիկ տնակներ, որտեղ օրվա որոշ ժամերին տրակտորիստները ճաշում, հանգստանում և թերթեր են կարդում։ Բրիգադաների կազմի մեջ մտնում են տարբեր ցեղերից կամ բարերից կոլտնտեսականներ։ Վերացվել են նախկինում պատմական հողի վրա գոյություն ունեցող խարդախությունները։

Բրիգադաները, օղակները աշխատում են սոցիալիստական մրցության, ստախանովյան, հարվածայնության մեթոդներով։ Իրենց սոցմրցման պայմանագրերը լավագույն կերպով կատարող կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների անունները գրվում են կարմիր իսկ լոգրերինը, որոնց քանակը չնչին է՝ սև տախտակի վրա։ Այժմ քրդուհին մասնակցում է հասարակական տնտեսական գործերին, նա ակտիվորեն պայքարում է գյուղատնտեսության, հանրային անասնապահության մթերատվությունը բարձրացնելու համար. նա տղամարդու հետ միասին մտնում է սոցմրցման մեջ։ Քրդուհին կոլտնտեսությունում տանում է նաև դեկավար աշխատանք։

Կոլտնտեսությունների սեզոնային աշխատանքների ժամանակ կանանց՝ փոքր երեխաների հոգսերից ազատելու համար, համարյա բոլոր գյուղերում բացված են մանկական հրապարակներ ու մանկամսուրներ։ Հեռավոր աշխատամասեր գնացող կոլտնտեսականների համար կազմակերպվում է հասարակական սնունդ։ Սովետական օրոք ստեղծվեցին բուրդ մասնագետ կադրեր՝ ագրոտեխնիկներ՝ կոմբայնավարներ, տրակտորիստներ, շոֆերներ և այլն։

Սովետական իշխանության շնորհիվ քրդերը ձեռք բերին սեփական դիր ու դրականություն։ Ռուսական այբուբենի հիման վրա, ստեղծվեց քրդական այբուբեն։

Այժմ Հայաստանի քրդական բոլոր գյուղերում կան դպրոցներ, որտեղ նախկին մեկ բուրդ «ուսուցչի» փոխարեն այժմ դասավանդում են միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեցող մի քանի տասնյակ ուսուցիչներ և ուսուցչուհիներ։

Աշակերտները, որոնց մեծ մասը կոմերիտականներ են ու պիոներներ, իրենց ուսուցիչների ղեկավարությամբ գյուղի հասարակության համար կազմակերպում են հակակրոնական դրույցներ, զեկուցումներ և ներկայացումներ։

Նրանք կոլտնտեսականների համար թերթերից կարդում են օրվա նորությունները, օգնում են կոլտնտեսականներին՝ արտերը մաքրում քարերից, դաշտում կոլտնտեսականների համար հաց, կերակուր տանում և այլն։

Բացի դպրոցից՝ քրդական գյուղերում գործում են կուլտուրական այլ օջախներ՝ ակումբ, գրադարան, կինո, թատրոն և ռադիո։

Անցյալում որևէ քաղաք գնալիս քրդուհու համար ամոթ էր համարվում կինո, թատրոն գնալը։ Այժմ այն կենցաղ է դարձել քրդուհիների համար։

Ակումբներին կից կան ագրոտեխնիկական խմբակներ, որոնք կոլտնտեսականների համար կազմակերպում են հողերի պարարտացման և գյուղատնտեսական այլ թեմաների շուրջը դրույցներ, զեկուցումներ։

Սովետական օրով արագությամբ փոփոխվեց քրդերի առողջապահական վիճակը, աճեցին քուրդ բժիշկ կադրեր։

Շրջանների բժշկական պերսոնալը կապված է ժողովրդի հետ, այցելում են հիվանդների բնակարանները, կոլտնտեսականների համար կազմակերպում են բժշկական դրույցներ, հակակրոնական զեկուցումներ։

Բացի հին սերնդի որոշ ներկայացուցիչներից, ողջ բնակչությունը դիմում է բժիշկների օգնությանը։ Շրջաններում կան հիվանդանոցներ։ Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու համար սիստեմատիկ կերպով կատարվում են պրոֆիլակտիկ սրբսկումներ։

Մեծ ուշադրություն է դարձվում երեխաների առողջապահության վրա։ 1937 թվականից սկսած բազմաթիվ քրդուհիներ իրբև նպաստ պետությունից մեծ գումարներ են ստանում։

Սովետական օրով քրդերից ստեղծվեցին գրականության, գիտության և այլ ասպարեզներում աշխատող կադրեր, Սովետական Միության Սոցիալիստական Աշխատանքի հերոսներ ինչպես օրինակ՝ Սիարանդով Սամանդը (Սովետական Միության հերոս), Նադո Մահմուդովը, Խալթ Զաթոևը, Մաքսիմ Ուրուսովը, Միրո Ասադյանը՝ պարտիական լավագույն աշխատողներ, Ուսիկ Բաքոևը՝ Հայկական ՍՍՌ Գերագույն դատարանի կոլեգիայի անդամ, գրողներ Հաջիե Ջնդին (Ֆիլ. գիտ. թեկնածու), Ղանատե Քուրդոն (Ֆիլ. գիտ. թեկնածու), Նուրե Պոլատովան (ասպիրանտուհի), Զարքադ Բաքոն (Ֆիլ. գիտ. թեկնածու), գրող Ջասմե Ջալիլը, Ռաշիտե Միքայելը և ուրիշներ, որոնք սերտ հարաբերությունների մեջ են քուրդ աշխատավորության հետ։ Քուրդ գիտնականները լինում են շրջաններում, կոլտնտեսականների համար կազմակերպում են զեկուցումներ, բանասացներից գրի են առնում ազգագրական ֆոլկլորային նյութեր։ Գրողներն իրենց գրվածքներում արտացոլում են նրանց կյանքն ու կենցաղը, նորը, սովետականը։

* * *

Գյուղատնտեսության մեքենայացման և կուլտուրական ռևոլյուցիայի հետևանքով քրդերի կյանքում արագացավ արխաիկ շրջանից մնացած նահապետական սովորությունների վերացման պրոցեսը։ Հիմնականում վերացան կնոջ առևանդումը և դրա հետևանքով առաջացած երկարատև վրիժառությունը, կրոնական ֆանատիզմը, մանիստական հայացքները և սնոտիապաշտության հետ կապված սովորությունները։ Մեծ փոփոխության ենթարկվեց քրդական գերդաստանի և ընտանիքի կազմը։ Նախկին նահապետական մալամաղը մասնատվեց և տեղի տվեց ընտանիքների։ Այժմ ոչ մի գյուղում չեք գտնի որևէ գերդաստան։ Գեռ կան բազմանդամ ընտանիքներ, որտեղ միասին են ապրում եղբայրներն իրենց կանանցով. հոր և եղբայրների հետ, երեխաներով, բայց այս տիպի ընտանիքների անդամների քանակն այնքան քիչ է և այնքան է փոխվել նրանց ընտանեկան հարաբերությունները, որ քրդական մալամաղն, հունա-հռոմեական ֆամիլա կամ հայկական գերդաստան անվանել չի կարելի։

Բարձրացել է քրդական ընտանիքի անդամների կրթական մակարդակը։ Կուլտուրական նոր ընտանիքում, հակառակ ավագության կարգի, նախապատվությունն այժմ տրվում է ոչ թե տան ավագին, այլ ընտանիքի ամենախելոք, ընտանիքը ղեկավարելու ընդունակություններ ունեցող անդամին, այդ թվում կանանց։

Այժմ հասարակական կյանքին՝ ժողովներին, ընտրություններին, պետական ու կոլտնտեսային ղեկավար աշխատանքներին կարող են մասնակցել և մասնակցում են ընտանիքի կարող բոլոր անդամները։

Ընտանիքում հիմնականում վերջ է տրված նորահարսների չխոսկանությանը։

Ընտանիքի կրթական մակարդակի բարձրացման հետևանքով արենակցական սպմամական կապերը վերացել են։ Տուն կառավարելիս, միմյանց պաշտպանելիս, տնային աշխատանքների մեջ և տարերային պատահարների միջոցին ընտանիքի անդամներն օգնում են միմյանց ոչ թե արենակցական-սպմամական, այլ հարևանական ընկերական հողի վրա։

Փոփոխության են ենթարկվել նաև քրդերի զգեստները։ Տղամարդկանց զգեստները, բացի հին սերնդի որոշ ներկայացուցիչներից, հիմնովին փոխվել են։ Այս գործում մեծ դեր խաղացին սովետական նոր արդյունաբերական քաղաքները, ինչպես, օրինակ՝ Թբիլիսին, Երևանը, Բաքուն և անդրկովկասյան մյուս քաղաքները։ Կանանց մի մասը դեռ հագնվում է քրդական հին տարազով, մյուսը՝ քաղաքացուհու կամ կիսով չափ քրդական և կիսով չափ քաղաքացուհու տարազով, վերջիններիս տիպարները կարելի է գտնել Թբիլիսիում։

Կանանց հին տիպի զգեստները հետևյալներն են, որոնք այժմ էլ դեռ գործածվում են։

Կրաոր (շապիկը)։—կարում են 4—5 մետր բյաղից կամ փաղուսխայից. իջնում է մինչև ոտները։ Կուրծքերը մեջտեղից բացված է լինում։ Շապկի կրծքավանդակի և մեջքի կողմը աստառ են գցում. թևերը միջակ լայնության են և հասնում են մինչև ձեռքի կոճիկները, չեն կոճկվում։

Դերա (զեյրա)։—ջահել քրդուհիները հագնում են 2—3, իսկ մեծահասակ կանայք 4—5 զերա։ Կարում են 4—5 մետր չթեղեն կամ թանկագին կտորներից։ Առաջին մասը ամրողջովին բաց է։ Սրանք ևս իջնում են մինչև ոտները։

Շալոկ (զոգնոց)։—կարում են մեկ ու կես մետր դույնզդույն կտորներից և բաններով (զոգնոցի կապով) կապում մեջքին։ Բանը գործում են բրդյա թելերից։

Պըշտ (կոնքաշոր)։—մեծ թաշկինակի չափ, գործում են բրդյա թելերից և ծալում եռանկյունաձև ու հետևից (զեյրանների վրայից) կապում մեջքին։ Պշտոր ամենից առաջ ունի կնոջ մարմինը ցրտից պաշտպանելու նշանակություն։

Ղոլրկ (ժակետ)։—կարում են 2 մետր մախմուրից։ Կարճ է, հասնում է մինչև մեջքը։ Կլապիտոնով երիզված, թևավոր է։ Կուրծքը եռանկյունաձև բաց է և կոճկվում է երկու ճարմանդներով։ Հագնում են զեյրանների վրայից։

Էլակ։—անթև է։ Կարում են 1½ մետր հասարակ կտորից։ Առաջին մասերը զարդարում են սաթե (սպիտակ) կոճակներով և հագնում են զեյրանների տակից։ Հասնում է մինչև մեջքը։

Պալտո։—նորամուծություն է։ Քաղաքացուհու ճաշակով, առնում են խանութներից և հագնում։

Անթարի։—այժմ վերացել է։ Կարում էին 6 մետր թավիշից։ Առաջին մասը բաց էր, կարճ թևերով, հագնում էին միայն տոն օրերին։

Գլխի հարդարանք։—Ֆինա (փես), գլխին գնում էին աղջիկների մի մասը։ Սրա շուրջը փաթաթում են փոշիներ և վրան կարում զրաՄեր ու հուլունքներ։

Քոֆյ։—ֆինայի մեջ գնում են կլորացած տախտակ, քոֆու վերին մասը զարդարում են զրաՄերով (20 կոպեկանոցներով), իսկ նրա աջ կողմը կարում են զոտրկր (մեսաքսյա սև թելերից երկար փունջ), որը կախվում է աջ այտի վրա։

Ղալե զեռա (ոսկյա շրիտ)։—մի երկար կտորի վրա կապում են ոսկեղեն զրաՄեր, և առջևից, քոֆու դեմ արած, կապում են գլխին։

Ղարաֆիլ—արծաթյա ոսկեջրած, կանթավոր կլոր զարդ։ Քրդուհիները հարսանյաց ուրախության օրերին կախում են քթի աջ կողմի անցքից։

Բարոենիկ։—արծաթյա երկար զարդեր, կախում են քունքերից։

Ռախտ։—արծաթյա հատիկներով շարան, քրդուհիները կապում են վզներից, իրենց կուրծքը զարդարում են նաև մորի-մրջաններով (հուլունքներով)։

Գոհար։—ականջներից կախելու համար արծաթյա կամ ոսկյա օղեր։

Ոտնաման.—տրեխի գործածությունը քրդուհիների միջից իսպառ վերացված է։ Այժմ հագնում են քաղաքատիպ կանացի տուֆլիներ, մի մասն էլ հին տիպի կօնդօրաներ (կրրնկավոր կոշիկներ)։ Հագնում են չուլկիներ և իրենց ձեռքով գործած գույնզգույն գուլպաներ։

Շըմըկներ.—չուստերի մի տեսակ, վրացական կենցաղի, քրդերի մեջ մուտք է գործել Վրաստանից։

Այժմ քրդուհիների միջից, իբրև գլխի զարդարանք, վերացել է լաչակը։ Ամոթխածության դեպքում, քրդուհին լաչակով ծածկում էր բերանը։

Տղամարդկանց հագուստներ

Սապիկ.—(սովորական), որոշ մարդիկ հետևելով հին տրադիցիաներին, շապիկի վրա կարում են բարստօն (վզնոց), որոնց վրա կարելի է տեսնել թռչունների պատկերներ կամ զանազան ձևի օրնամենտներ։

Բեշմետ.—կարում են սև սատինից։ Առջևից բաց է լինում, կոճկում են ճարմանդներով։ Թևավոր է, իջնում է ծնկներից քիչ ցածր։ Հագնում են ևլակի (ժիլետի) վրայից։

Չուխ (չուխա).—կարում են 4 մետր կապույտ մահուդից։ Առջևից բաց է. Թևավոր է։ Կոճկվում է ճարմանդներով։ Հագնում են բեշմետի վրայից։ Չուխը, որ անցյալում պալտոյի տեղ էին գործածում, այժմ համարյա վերացել է։

Շալ (շալվար).—այժմ ոչ ոք հին տիպի չի հագնում, որը կարում էին 3 մետր կտորից, լայն էր լինում և կապում գոտինով։ Այժմ հագնում են կոստյում, բրյուկ և պալտո։

Վերացել է քոլոզը (հին տիպի գլխարկը), գլխին դնում են փափախ և կեպկաներ։ Ոտնամաններից հագնում են տուֆլի, երկարաճիտ կոշիկներ և սապոգ։

Անցյալում գերդաստանները, պատրոնիմիաները ունեին առանձին գերեզմանատներ, այժմ վերջ է տրվել նաև այդ սովորությանը։ Գյուղերն ունեն ընդհանուր գերեզմանատներ։

Աչքի ընկնող փոփոխություններից մեկն էլ, որ կատարվել է սովետական օրով քրդական ընտանիքում՝ այն է, որ իսպառ վերացել է բազմակնությունը, սրա հետևանքով վերացավ հոււիությունն ու լեվիրատ ամուսնության ձևը։

Ընտանիքում, իբրև սովորություն հիմնականում վերացել է անչափահասներին ամուսնացնելու երևույթը, վերացել է էնդոգամ ամուսնությունը, որ նախառևոլյուցիոն շրջանում սովորական երևույթ էր անդրկովկասյան համարյա բոլոր քրդերի մեջ։

Այժմ, կրթված տղան ամուսնանալիս նկատի ունի ոչ թե իր ծնողների, պսմամների ընտրած աղջկան, այլ իր ցանկացած աղջկան։

Քրդական հարսանեկան սովորության մեջ բացասական դեր էր կատարում քրդուհիների համար տրվելիք ղալանը, որը 1929 թ. վերացել է պետականորեն, բայց մնացուկային ձևով դեռևս պահպանվում է հետամնաց անկյուններում։ Ամբողջովին վերացել են նաև ռեշիքքյարթմա (օրորոցում ամուսնացնելու) ձևը, որը մասամբ գույգերի դժբախտության պատճառ էր դառնում։

Հարսանեկան սովորության մեջ Նիշանկըրըն (նշանդրեքը), որը կատարվում էր Նաքահով (կրոնական արարողությամբ), նույնպես այժմ վերացել է։

Այժմ հարսանիքն անում են թե գովանդի (շուրջ-պար) և թե խնճույքի ձևով, որը նորություն է քրդերի կյանքում։ Աղջկա ջհեզը (օժիտը) դեռ պահպանվում է հարսանեկան սովորության մեջ, ջհեզը բաղկացած է լինում կտորեղենից, զարդերից, գլխի հարդարանքից, գուլպաներից և այլ ձեռագործներից։

Դեռ բազմաթիվ ընտանիքներում, ինչպես նախկինում, հարսանիքը կատարում են սարդուստիի (քավորի) ղեկավարությամբ և նրա անմիջական մասնակցությամբ՝ զարդավեյով։

Զարա դավեն (փեսի ծառ) կատարվում է հարսանիքի վերջին օրը, երբ հարսին փեսի տուն են տանում, ծառերի ճյուղերից մեկը զարդարում են մրգերով։ Փեսի մոտիկ ընկերները կանգնում են փեսի տանիքի վրա, հարսին ներս տանելիս, մրգերով զարդարած ճյուղը թափ են տալիս հարսի գլխին։

Ժողովրդի հասկացողությամբ զարա դավեն զարդարում են և թափ տալիս հարսի գլխին նրա համար, որպեսզի նա էլ ծառի պես լինի բերրի (երեխա ունենա)։ Այս սովորությունը սրբագործվել է կրոնական արարողությամբ։ Այժմ զարա դավեն զարդարում են իբրև սովորույթի մնացուկ, որպես ուրախություն պատճառող հարսանեկան սովորություն, կրոնական արարողություններ չեն կատարվում։

Վերացել է նաև քրդուհու կուսությունը ստուգելու համար հարսանիքից հետո հարսի և փեսայի խրյաթը (առագաստ) մտնելու սովորությունը, որն անցյալում քրդուհուն ստորացնող մի սովորություն էր։

Նորահարսը, նոր ընտանիք տեղափոխվելիս, առաջվա հարսի պես իրեն ոտար և ընկճված չի զգում, նա գիտե իր իրավունքները, գիտե, որ ինքը այդ ընտանիքի հավասար անդամն է, վաղվա կոլտնտեսային դաշտերում աշխատող, հասարակական կյանքին մասնակցող և զեկավար աշխատանք կատարող։

Այսպիսով, քրդական ընտանիքն իր կուլտուրական բարձր մակարդակով, նոր կյանքով և կենցաղով իր վրայից թոթափել է անցյալի նախապաշարումներն ու հետամնացությունը և սովետական բաղմադդ ժողովուրդների հետ միասին ապրում է նոր, սոցիալիստական կյանքով ու կենցաղով, պայքարում է կոմունիզմի կառուցման համար մեր երկրում։

ԱՄԻՆԵ ԱՎԴԱԼ